Դրամական միջոցների գրավի պայմանագիր
03-2569-22/Գ

ք. Գյումրի Երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի քսանյոթին

«Յունիբանկ» Բաց բաժնետիրական ընկերությունն (ստորև՝ «Գրավառու»), ի դեմս Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանի, ով գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, ում անունից 23.12.2022թ. տրված N 3170 գլխավոր լիազորագրի հիման վրա հանդես է գալիս «Յունիբանկ» Բաց բաժնետիրական ընկերության «Գյումրի» մ/ճ կառավարիչ Ծովիկ Արտավազդի Գրիգորյանը /ծնված՝ 12.11.1961թ., անձ.՝ AT0509278, տրվ՝ 25.06.2020թ., 064-ի կողմից, հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 9/1 շենք, բնակարան 4/, մի կողմից,

«Աքարա» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /հասցե՝ ք. Գյումրի, Ծուլուկիձեի 5, ՀՎՀՀ՝ 05524184/ /այսուհետ՝ «Գրավատու նաև Պրինցիպալ»/, ի դեմս տնօրեն՝ Արթուր Արամի Հովհաննիսյանի /ծնված՝ 23.01.1983թ., անձ.AN0798142, տրված՝ 09.01.2014թ., 016-ի կողմից, հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Տոլատոյի փողոց, 47 տուն/, ով գործում է կանոնադրության հիման վրա մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. 27.12.2022թ. «Յունիբանկ» ԲԲԸ-ի և «Աքարա» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ 03-2569-22SPPI13 Երաշխիքի տրման մասին պայմանագրերի համաձայն «Յունիբանկ» ԲԲԸ-ն «Աքարա» ՍՊԸ-ին տրամադրում է 1,758,400 /մեկ միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ գումարի բանկային երաշխիք ՀՀ Շիրակի մարզպետարանի /այսուհետ «Բենեֆեցիար»/ և «Աքարա» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝Պրինցիպալ/ միջև 06.12.2022թ. կնքված N ՀՀ ՇՄ ԳՀՁԲ 22/09-2 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար /հիմնական պարտավորություն/ մինչև՝ 03.08.2023թ. /27.03.2023թ. + 90 աշխատանքային օր/:

1.2. 27.12.2022թ. կնքված թիվ 03-2569-22SPPI13 Երաշխիքի տրման մասին պայմանագրերով նախատեսված Պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովման համար Գրավատուն Գրավառուին գրավ է հանձնում սեփականության իրավունքով իրեն պատկանող և «Յունիբանկ» ԲԲԸ-ում իր անվամբ բացված թիվ 24103045615600 բանկային հաշվին առկա 2,000,000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ դրամական միջոցները /ստորև՝ «Գրավի առարկա»/, որը սառեցվում է սույն պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում:

1.3. Գրավատուն սույնով երաշխավորում և հավաստիացնում է, որ Գրավի առարկան ոչ մի տեղ առաջնային ապահովմամբ գրավ չի դրված, երաշխավորության և նմանատիպ այլ պայմանագրերի հիմքով չի հանդիսանում Գրավատուի կամ երրորդ անձանց պարտավորությունների կատարման ապահովման առարկա, ենթակա չէ բռնագրավման, չի տնօրինվում երրորդ անձանց կողմից, սահմանափակման (արգելադրման) տակ չի գտնվում, նրա տնօրինման, տիրապետման, օգտագործման եւ այլ հարցերի շուրջ չկա դատարանի կողմից օրինական ուժի մեջ մտած վճիռ, դատավճիռ կամ որոշում, չկա նրա վրա բռնագանձում տարածելու որեւէ երրորդ անձի պահանջ կամ հայցադիմում, այն վերցված չէ կալանքի տակ հետաքննություն եւ նախաքննություն իրականացնող եւ այլ իրավասու մարմինների կողմից:

1.4. Սույն պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում Գրավի առարկան մնում է գրավի և արգելանքի տակ, և Գրավատուն իրավունք չունի առանց Գրավառուի համաձայնության դուրս գրել, փոխանցել, գրավ դնել, օտարել, զիջել, հաշվանցել կամ այլ կերպ տնօրինել Գրավի առարկան կամ դրա մի մասը կամ դրա նկատմամբ իր սեփականության իրավունքը կազմող իրավազորություններից որևէ մեկը, ինչպես նաև այլ կերպ խոչընդոտել Գրավառուի կողմից այդ գումարների տիրապետման իրավունքի իրականացմանը, կատարել Գրավի առարկայի կորստին, դրա արժեքի նվազեցմանը կամ Գրավառուի կողմից այն տիրապետելու իրավունքի վերացմանը հանգեցնող որևէ գործողություն:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գրավատուն պարտավոր է.

2.1.1. Գրավառուին նախազգուշացնել գրավադրվող առարկայի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների և այլնի մասին,

2.1.2. Գրավի առարկան միայն Գրավառուի համաձայնությամբ, օրենսդրությամբ սահմանված կարգով, փոխարինել հավասարարժեք այլ գույքով, եթե Գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը դադարել է օրենքով սահմանված հիմքերով,

2.2. Գրավատուն իրավունք ունի.

2.2.1. Գրավառուի համաձայնությամբ Գրավի առարկան փոխարինել հավասարարժեք այլ գույքով:

2.3.Գրավառուն իրավունք ունի.

2.3.1. սույն պայմանագրով ապահովված պարտավորությունների փոփոխման, ինչպես նաև Գրավի առարկայի սեփականատիրոջ փոփոխման դեպքում կատարել սույն պայմանագրի լրացուցիչ վերագրանցում,

2.3.2. սույն գրավի պայմանագրից բխող իր իրավունքները փոխանցել այլ անձի:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գրավառուն և Գրավատուն պատասխանատվություն են կրում սույն պայմանագրի որևէ դրույթի, պայմանի խախտման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

3.2. Սույն գրավով ապահովվում է Գրավառուի պահանջն այն ծավալով, որն առկա է փաստացի բավարարման պահին: Գրավառուի պահանջը մասնավորապես ներառում է՝

- Սույն պայմանագրի 1.1 կետում նշված երաշխիքի տրման մասին պայմանագրով Պրինցիպալի կողմից պարտք բոլոր գումարները ներառյալ՝ տոկոսները և այլ վճարները,
- Պրինցիպալի ստանձնած պարտավորությունների կատարումն ուշացնելու հետևանքով Գրավառուին պատճառված վնասները՝ ներառյալ տուգանային տոկոսների գումարները և տուգանքները,
- Գրավառուի պահանջների բավարարման հետ կապված Գրավառուի կողմից կատարված ծախսերը՝ ներառյալ Գրավի առարկայի բռնագանձման և արտադատական իրացման հետ կապված, Գրավի առարկայի սեփականության փոփոխման հետ կապված օրենքով սահմանված նոտարական վավերացման ծախսերը և վճարման ենթակա հարկերի գումարները, Գրավի առարկան սեփականության իրավունքով տիրապետելու հետ կապված Գրավառուի՝ մինչև Գրավի առարկայի իրացումը կատարված ծախսերը՝ ներառյալ օրենքով սահմանված վճարված հարկերի գումարները,
- Գրավառուի պահանջների բավարարումը արտադատական կարգով իրացնելուն խոչընդոտելու հետևանքով Գրավառուին պատճառված վնասների փոխհատուցումը,
- Գրավառուին սույն պայմանագրի 1.1 կետում նշված երաշխիքի տրման մասին պայմանագրով կամ սույն պայմանագրի կապակցությամբ վճարվելիք ցանկացած այլ գումարներ:

Վերոհիշյալ պահանջները բավարարվում են Գրավառուի հայեցողությամբ սահմանված հերթականությամբ:

4. ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Գրավատուն և Գրավառուն սույնով հաստատում են և Գրավատուն տալիս է իր համաձայնությունը, որ Գրավատուի կողմից սույն պայմանագրի 1.1 կետում նշված երաշխիքի տրման մասին պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Գրավի առարկայի վրա բռնագանձումը կատարվում է առանց դատարան դիմելու Գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու, այդ թվում՝ Գրավի առարկան հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց Գրավառուին ի սեփականություն հանձնելու միջոցով:

4.2. Գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու կարգի կիրառման իմաստով սույն պայմանագրի 1.1 կետում նշված երաշխիքի տրման մասին պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու դեպք է համարվում Գրավառուի՝ պարտավորությունները կատարելու մասին Գրավատուին/Պրինցիպալին ներկայացված ծանուցումը, որը համարվում է պատշաճ կերպով ներկայացված, եթե ուղարկվել է գրավոր պատվիրված նամակով Գրավատուի/Պրինցիպալի՝ Գրավառուին հայտնի վերջին հասցեով, կամ հանձնվել է Գրավատուին/Պրինցիպալին կամ Գրավատուի/Պրինցիպալի լիազոր ներկայացուցչին:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագրի ստորագրման և կնքման պահից, և գործում է մինչև 27.12.2022թ. կնքված թիվ 03-2569-22SPPI13 Երաշխիքի տրման մասին պայմանագրով սահմանված պարտավորությունների լրիվ և ամբողջական կատարումը:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (Ֆորս մաժոր)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրն՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Դրամական ռեֆորմի դեպքում սույն պայմանագիրը ենթակա է փոփոխության օրենքով սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագիրը կցվում է «Յունիբանկ» ԲԲ ընկերության և «Աքարա» ՍՊԸ-ի միջև 27.12.2022թ. կնքված թիվ 03-2569-22SPPI13 Երաշխիքի տրման մասին պայմանագրին և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

7.3. Իրավահաջորդության կարգով գրավադրված գույքի նկատմամբ Գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը, իսկ Գրավատուի իրավահաջորդը զբաղեցնում է Գրավատուի տեղը և կրում նրա բոլոր պարտականությունները:

7.4. Սույն պայմանագրի կապակցությամբ Գրավատուին ներկայացված ցանկացած պահանջ, ծանուցում համարվում է պատշաճ կերպով ներկայացված, եթե ուղարկվել է գրավոր պատվիրված նամակով Գրավատուի/Պրինցիպալի՝ Գրավառուին հայտնի վերջին հասցեով, կամ հանձնվել է Գրավատուին/Պրինցիպալին կամ Գրավատուի/Պրինցիպալի լիազոր ներկայացուցչին:

7.5. Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից, որոնցից մեկական օրինակ տրվում է Գրավատուին/Պրինցիպալին/ և Գրավառուին:

7.6. Սույն պայմանագրի առնչությամբ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են հաճախորդի հայեցողությամբ՝ստորև նշված տարբերակներից բացառապես մեկը «V» նշանի օգնությամբ ընտրելու միջոցով.

Բոլոր վեճերի լուծումը հանձնվում է «Օպտիմուս Լեքս» Ընկերության մշտապես գործող Արբիտրաժային դատարանին, այսուհետ նաև՝ Արբիտրաժային դատարան, որում գործի քննությունը իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին և Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Սույնով Պրինցիպալը հավաստիացնում է, որ Բանկը ծանոթացրել է իրեն Արբիտրաժային դատարանում գործերի քննության ընթացակարգին, և գրավոր բացահայտել է Կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ բավարար տեղեկատվություն: Վարկառուն հաստատում է, որ ստացել է արբիտրաժային վարույթի ընթացքում հաճախորդի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական ամփոփագիրը: Արբիտրաժային դատարանի կանոնակարգը տեղակայված է Ընկերության պաշտոնական ինտերնետային www. optimuslex.am կայքում: Կողմերը սահմանում են, որ Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Վեճի քննությունը իրականացվում է գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման, բացառությամբ «Արբիտրաժային դատարանի կանոնակարգով» նախատեսված դեպքերի՝ ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն է հայերենը, Արբիտրաժի վայրն է ՀՀ, ք. Երևանը,

- կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՐԱՎԱՌՈՒ	ԳՐԱՎԱՏՈՒ/ՊՐԻՆՑԻՊԱԼ
«Յունիբանկ» ԲԲԸ	«Աքարա» ՍՊԸ
անվանումը	անվանումը
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, թիվ 1-5	ք. Գյումրի, Ծուլուկիձեի 5
հասցե	հասցե
Վարչության նախագահ	Տնօրեն
Ներկայացուցչի պաշտոնը	Ներկայացուցչի պաշտոնը
Մեսրոպ Հակոբյան	Արքուր Արամի Հովհաննիսյան
Ներկայացուցչի անուն, ազգանունը	Ներկայացուցչի անուն, ազգանունը
«Գյումրի» մ/ճ կառավարիչ Ծոլիկ Արտավազդի Գրիգորյան	
գործադրված անձ	
Ստորագրություն Կ.տ.	Ստորագրություն Կ.տ.

կատարող՝ Ա. Գևորգյան